Հ. Յ. Դ. ԱՇԱԿ. ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

—

ա. Նիստ. ապրիլի 25 ժ. 4-ին

Հանդիսաւոր բացում

Հայաստանի Խորհրդարանի դահլիճում

Նիստը բացւում է Դաշնակցութեան մարշով։

Նախագահում է կազմակերպիչ յանձնախմբի ներկայացուցիչ՝ Հ. Ասատրեանը։

Հ. ԱՍԱՏՐԵԱՆ — Արիւնների, տառապանքի և վերածնման յոյսերի այս խորհրդաւոր օրերին, հաճելի պարտականութիւն է ընկել ինձ վրայ—բաց անել Հ. Յ. Դ. Աշակ. Միութիւնների անդրանիկ համագումարը։

Մի տարի առաջ, երբ մեր հայրենիքում աւերմունքն ու արհաւիրքը այնքան ահեղ բովանդակութիւն չէին ստացել, երբ այսօր այլ կործանուած քաղաքներից և հրկիզուած շէներից շատերը դեռ ևս կանգուն էին այն ժամանակ մենք նախաձեռնեցինք այս համագումարը հրաւիրելու աշխատանքին։ Բայց մեր յայտարարութեան հետ միաժամանակ դէպի մեր երկրի սահմանները շարժւեցին Թրքական հորդաները և բոլոր վայրերի մեր ընկերները բնական ու անհրաժեշտ մղումով հարկադրւեցին թողնել ամէն ստեղծագործ աշխատանք և շտապել դէպի մեր ժողովրդի արիւնոտ օրհասը. ‑

Եւ այն մռայլ օրերին, երբ ամէն կողմից դաւաճանւեց մեր ժողովուրդը, երբ մարտնչող սերունդները փարակւեցին վեհերական ախտերով, երբ վատերն ու թոյլերը յուսալքւեցին—այն ծանր օրերին, գուցէ մեր ժողովրդի ոչ մէկ հասարակական խաւ չզգաց այնքան գիտակ ու անդաւաճան, որքան հայ աշակերտութիւնը — յանձին դաշնակցական աշակերտութեան։ Եւ այժմ, ահեղ ցնցումներից յետոյ և ահեղ ցնցումների մէջ, այդ աշակերտութիւնը նորէն ամփոփւած իր փայփայած դրօշի տակ, հաւաքւել է այստեղ, իր անվերապահ խօսքն ասելու մեր աշխատաւորութեան հանդէպ և իր յեղափոխական ուղին ընդգծելու։

Շատ բարբաջանքներ ենք լսում ամէն կողմից, շատեր են մեզ մեղադրում, որ մենք դուրս ենք գալիս աշակերտական շրջանակից և զբաղւում հասարակական - քաղաքական խնդիրներով։ Բայց այդ անմիտ բարբաջանքների հեղինակները կուրօրէն չեն տեսնում, որ մենք ծնւել ենք այն արիւնոտ երկրում, որ Հայաստան է կոչւում և ուր ծնւելու պատիւն ու բախտաւորութիւնը ամէն ժողովրդի վիճակւած չէ։

Այսօր, մեր առաջ դրւած է մեր յօշոտւած հայրենիքի վերականգնման խնդիրը, կամ ինչպէս ձևակերպւած է, Միացեալ և Անկախ Հայաստանի գաղափարի իրականացումը։ Եւ մենք իրաւունք չունենք չշահագրգռւելու այդ խնդրի բարեյաջող լուծմամբ։ Միացեալ ու Անկախ Հայաստան. դա մի գաղափար է, որ հիմնաւորւում է մի ժողովրդի դարաւոր տառապանքով և մի խնդիր, որ պիտի լուծւի գոհաբերող սերունդների աշխատանքի և արիւնի յաղթանակով։

Զգում ենք, որ ապագան մի ծանր ու հաճելի պարտականութիւն պիտի դնի մեր ուսերին, որովհետև Արևելքի պատմութիւնը մի մեծ առաքելութիւն է վիճակել մեր կուսակցութեան։ Դա Հայաստանի տառապած ժողովուրդների համերաշխութեան ու բարձրացման գաղափարն է, որ ամբողջ քառորդ դար, գերանիշն է եղել Հ. Յ. Դաշնակցութեան բոլոր նպատակների։ Եւ այսօր, ձևակերպւում ու իրականանում է այդ լուսեղէն հեռանկարը, որովհետև Հ. Յ. Դաշնակցութեան դրօշի տակ, Հայաստանի ինտերնացիոնալի գաղափարն է յամառօրէն հիմնաւորւում։ Եւ մենք Դաշն. նոր սերնդի ներկայացուցիչներս չենք կարող չձգտել և պարտաւոր ենք ձգտել, որ Հայաստանի միջազգային աշխատաւորութեան Դաշնակցութիւնը վերջապէս յաղթանակի մեր պառակտւած և արիւնոտ հայրենիքում...

Ս. ՂՈՒԿԱՍԵԱՆ. — Թիֆլիսի Դաշն. Աշակ. Միութեան կողմից ողջունում եմ մեր անդրանիկ համագումարը։ Ուղիղ տասներկու տարի առաջ, ցարիզմի բռնապետութեան ժամանակ, մեր ընկերները գաղտնի զնդաններում բացեցին իրենց համագումարը։ Իսկ այսօր, ազատ հայրենիքում, այն էլ Հայաստանի Խորհրդի դահլիճում բացում ենք մեր անդրանիկ համագումարը։ Հայ աշխատաւորութիւնը մատաղ սերնդից մեծ ակնկալքներ ունի և հայ աշակերտութեան այս մեծ հաւաքի համագումարը այսօր իր երաշխիքի անկեղծ խօսքը պիտի ասի։ Մեծ է մեր պարտականութիւնը և մենք պիտի ձգտենք արդարացնելու մեր վրայ դրւած յոյսերը։

Ջ. ԲԱՂՐԱՄԵԱՆ.—Ալէքսանդրապոլի դաշնակցական աշակերտութիւնը ինձ վրայ պարտք է դրել ողջունելու մեր անդրանիկ համագումարը։ Կեանքի և աշխատաւորութեան դրութեան բարելաւմանը մենք պարտաւոր ենք նպաստելու։ Մեր մեծ ընկերները մեզ ժառանգութիւն են թողել մի սրբազան գաղափար և մենք պիտի աշխատենք իրականացնել այդ գաղափարի յաղթանակը մեր արիւնոտ աշխարհում։ Ցանկանում եմ ի սրտէ

մեր համագումարին յաջող եք։

Ս. ՎՐԱՑԵԱՆ.—Աշակերտ ընկերներ. Հ. Յ. Դաշն. Արեւելեան Բիւրօն իմ վրայ պարտք է դրել ողջունելու ձեր անդրանիկ համագումարը։ Առաջին աշակերտական համագումարը անկախ Հայաստանում պատմական նշանակութիւն պիտի ունենայ մեր ապագայ կեանքի համար։ Եթէ մի յետադարձ հայեացք ձգենք մեր կուսակցութեան պատմութեան վրայ, կարող ենք բաժանել երկու խոշոր շրջանների։ Մինչեւ այժմ նա եղել է ազգային քաղաքական կուսակցութիւն, չնայած, որ նրա ծրագրի հիմքում դրուած են եղել սոցիալիստական սկզբունքներ եւ դասակարգային պայքարի հաւատամքը։ Նա ստիպուած է եղել պաշտպանելու հայ ժողովրդի քաղաքական դատը։ Երբ մի ժողովուրդ վտանգուած է ֆիզիքապէս, նրա հայրենիքում, խօսել միայն դասակարգային, սոցիալիստական գաղափարների մասին, կը նշանակէ պատմական սխալ կատարել։ Այսօր հայ ժողովրդի քաղաքական դատը, կարծես, վճռուած է համարեայ եւ նրա ֆիզիքական կեանքը թւում է ապահովուած եւ մեր կուսակցութիւնը թեւակոխում է երկրորդ շրջանը՝ սոցիալիստական անմիջական գործունէութեան շրջանը։ Հ. Յ. Դաշնակցութիւնն այսուհետեւ հնարաւորութիւն պիտի ունենայ սոցիալիստական լայն աշխատանք կատարելու եւ Հայաստանի դեմոկրատիայի ու գիւղական դատը վարելու։

Ի՞նչ է լինելու դաշնակցական աշակերտութեան դերն այս խնդրում։ Ամենից առաջ եւ ամենից աւելի աշակերտութիւնը պէտք է աշխատի լայնացնել իր մտաւոր հորիզոնները։ Պէտք է զարգանալ, կատարելագործուել եւ պատրաստուել Հայաստանի համար գիտակից, առողջամիտ, ձեռներէց եւ զարգացած քաղաքացիներ դառնալու։ Մեր որ աւերուած ազատ Հայաստանը ահագին կարիք ունի նոր, թարմ ու ձեռնհաս գործիչների եւ այդ գործիչները ձեր շարքերից պէտք է դուրս գան։

Երկրորդ՝ աշակերտութիւնը, որպէս կազմակերպուած ույժ, պէտք է նպաստէ մեր կուսակցութեանը, իր աշխատանքների մէջ, պէտք է աշխատէ Հայաստանի պետական կազմակերպութեան գործում։ Ահա այս զգացմունքով եւ այս ցանկութիւններով ես ողջունում եմ ձեր համագումարը։

ԱՂ. ԽԱՏԻՍԵԱՆ. Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան դաշնակցական անդամների կողմից ես ողջունում եմ Դաշն. Աշակ. Միութիւնների համագումարը։

Յոյս ունենք, որ դաշնակցական աշակերտութիւնը կիրականացնի այն բոլոր ակնկալիքները, որ ունին մեր հայրենիքն ու ժողովուրդը եւ որոնց մասին խօսեց ընկ. Վրացեանը։

Հայ աշակերտութեան, մանաւանդ դաշնակցական աշակերտութեան վրայ պատմութիւնը մեծ պարտականութիւն է դրել։

Այսօր, մեր կառավարութեան առաջ հերթական - ծանրակշիռ հարց է դրուած. դա նրա կազմակերպման եւ ամրապնդման հարցն է։

Մեր պետութիւնը բաղկացած է զանազան ազգութիւններից եւ մինչեւ որ այդ ժողովուրդները համերաշխութեան ուղին չգտնեն այս երկրում չի կարող ոչ մի հասարակական-պետական աշխատանք կատարուել։

Դուք պարտաւոր էք հարեւան ժողովուրդների մատաղ սերնդի հետ մշակել ընկերական յարաբերութիւն, աջակցել ու կազմակերպել նրանց եւ այդպիսով ապագայ Հայաստանի քաղաքացիների մէջ ամրացնել համերաշխ գործակցութեան գիտակցութիւնը։

Մեր հայրենիքն ուսումնասիրուած չէ. եւ այդ մեր կեանքի ամենացաւոտ երեւոյթներից մէկն է. մի երեւոյթ, որ մեծապէս դժուարացնում է մեր կազմակերպչական-պետական աշխատանքը։

Դուք պարտաւոր էք ուսումնասիրել ձեր երկրի աշխարհագրութիւնն ու ժողովուրդների, մանաւանդ ձեր ժողովրդի պատմութիւնը։

Մօտաւոր ապագայում դուք պիտի լինէք Հայաստանի ղեկավար տարրը եւ դուք պիտի աշխատէք ստեղծել այն բոլոր պայմանները, որոնք անհրաժեշտ են մի անկախ երկրի գոյութիւնը ապահովելու։

Վ. ԽՈՐԷՆԻ. Հայաստանի ազատ ու անկախ հանրապետութեան հողի վրայ, ողջունում եմ Հ. Յ. Դ. աշակերտութեան անդրանիկ համագումարը՝ Հ. Յ. Դ. Հայաստանի եւ Վրաստանի Կենտրոն. Կոմիտէների եւ «Հայաստանի Աշխատաւոր» թերթի խմբագրութեան կողմից։ Ես ցանկանում եմ, որ դուք լինէք այս մեծ ժամանակին արժանաւոր սերունդը, որ իր ժողովրդի ազատութեան ու երջանկութեան համար այնպէս աշխատէր՝ որպէս տառապող մարդկութեան ազատագրութեան ու երջանկութեան համար։ Թող ձեր ազգային-դեմոկրատիկ գործունէութեան եւ մարդկութեան նպատակների մէջ ոչ մի հակասութիւն չլինի։ Աշխատեցէ՛ք ձեր դժբախտ ժողովրդի ազատագրութեան համար, աշխատեցէ՛ք ազատ Հայաստանում ստեղծել մի կատարեալ Ազատապետութիւն՝ դրանով իսկ դուք աշխատած կլինէք սոցիալիզմի եւ աշխատաւոր մարդկութեան միջազգային եղբայրութեան համար։ Ես յոյս ունեմ, որ դուք ձեր մեծ ու նշանակալից ժամանակի արժանաւոր ու բախտաւոր զաւակները կլինէք եւ ձեր ժամանակի սոցիալիստական մեծ խորհուրդի համեմատ եւ ձեր, իբրեւ նոր սերնդի վրայ դրուած համամարդկային վսեմ պարտականութիւններին արժան գործեր կը կատարէք։

Ողջոյն եւ յաջողութիւն ձեր սուրբ գործին։ (Շար.)

ՂԱՐԱՔԻԼԻՍԷԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Տարեկիցի առթիւ

(Դաշնակցական «Արարատ» զօրամասի նահատակ ընկերների եւ քաջերի Մովսիսեանի յիշատակին)

I

Երզնկայից Դիլիջան...

Այդ երկար ու անփառունակ ճանապարհն անցանք կարճ ժամանակում։ Ու մի օր էլ բարոյալքուած եւ ուժասպառ հայ զօրքը հասաւ Դիլիջան։

Այստեղ, ղեկավարներն ասացին նրան, որ «այլեւս ազատ ես եւ կարող ես բռնել ցանկացած ուղին»։

Հայ զօրքը ցնուած ու տխուր պատրաստուեց ցրուել եւ մի մասն արդէն ցրուել էր, երբ հասաւ Երեւանի Հայոց Ազգային Խորհրդի հեռագիրը «Դիմացէ՛ք երեք օր եւս եւ հնարաւորութիւն ունէք բանակցութիւններ սկսելու թուրքերի հետ»։

Երեք օր եւս դիմանալ!

Այդ նշանակում էր ամենակարճ ժամանակի ընթացքում ի մի հաւաքել ցրուած զօրքերը, կարգի բերել լքուած շարքերը, ոգի ներշնչել նրանց եւ վերադառնալ Ղարաքիլիսէ։

Դժուարին խնդիր, բայց եւ այնպէս պէտք էր գլուխ բերել, պէտք էր բարոյալքուած ու ցիրուցան զինուորներից մարտական միաւորներ ստեղծել։

Մի խօսքով պէտք էր հրաշք կատարել եւ կատարուեց հրաշքը...

—

Դիլիջանի հայոց եկեղեցու բակում հազարաւոր զինուորներ խռնուել էին «Արարատ» զօրամասի հրամանատար Գ. Նժդեհի շուրջը եւ լսում էին նրան։

Նժդեհն հրամայուած էր անմիջապէս վերադառնալ Ղարաքիլիսէ, հետախուզելու թշնամու դիրքերն ու ույժերի դասաւորումը եւ տեղեկացնել. «Վայրկեանը ճակատագրական է. վերջացրեց Նժդեհը. ով դեռ չի դաւաճանել Հայ ցեղին, թող հետեւի ինձ։

Ու «Արարատ»ը բազմահազար ամբոխի ուռաների տակ, բռնեց Ղարաքիլիսէի ճանապարհը։

II

Լուսաբացին արդէն ամբողջ զօր-